15.07.2016թ

գ.Ծաղկունք

ՔԱՂՎԱԾՔ

Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ընդհանուր ժողովի արձանագրությունից

2016թ-ի հուլիսի 15-ին ժամը 15:00-ին Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի կուլտուրայի տան դահլիճում կայացավ Ծաղկունք համայնքի բնակիչների ընդհանուր ժողովը:

ժողովին ներկա էին Ծաղկունք համայնքի ավագանու անդամները, բուժ-ամբուլատորիայի աշխատակիցները, գյուղապետարանի համայնքային ծառայողները, Արմավիրի մարզպետարանի աշխատակից՝ Գևորգ Գևորգյանը, ինչպես նաև համայնքի թվով 37 բնակիչներ:

Օրակարգում՝ Ծաղկունք համայնքի ղեկավարի հաշվետվությունը՝ 2016թ-ի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Համայնքի ղեկավար Դ. Կարապետյանը ներկաներին ներկայացրեց 2016թ-ի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքները՝ համայնքի բնակիչների իրավունքների պաշտպանության բնագավառում, հանգամանորեն անդրադարձավ նաև ֆինանսների, պաշտպանության, քաղաքաշինության և հողօգտագործման, կոմունալ տնտեսության և բարեկարգման, տրանսպորտի, առևտրի և սպասարկման, սոցիալական ծառայության և գյուղատնտեսության բնագավառներում կատարված աշխատանքներին:Համայնքի ղեկավարը ներկայացրեց նաև բյուջեի եկամուտների մասով կիսամյակային հաշվետվություն .վարչական բյուջեով պլանավորված 15,682,0 հազ. դրամից , փաստ. 16.168,6 հազ. դր 103,1%, որից՝ 6.036,0 հազ. դրամ սեփական եկամուտների մասով, փաստ. 6.467,2 հազ.դր.,107,1%,որից՝

ա/ հողի հարկ պլ. 2.600.0 հազ. դրամ, փաստ. ՝ 2,302,9 հազ. դրամ/ 88,6% /

բ/ Գույքահարկ փոխադրամիջոցների համար պլ.2.250,0 հազ. դր. , փաստ. 1,168,3 հազ. դր. /51,9%/:

գ/ Գույքահարկ շենքերի և շինությունների համար պլ. 650,0 հազ. դր. փաստ.

2,682,4 հազ. դր./ 412,7%/:

դ/ Տեղական տուրքերի մասով պլ. 299,0հազ. դր. փաստ. 60,0 հազ. դր. /20,1% /:

ե/ Վարձակալական հողերի վճար պլ. 230,0 հազ. դր.փաստ. 253,6 հազ. :

Դ. Կարապետյանը նշեց նաև համայնքում առկա մի շարք հիմնախնդիրների մասին մասնավորապես խմելու ջրի ներհամայնքային ցանցի վերանորոգման, միջհամայնքային ճանապարհների բարեկարգման, կուլտուրայի տան դահլիճի վերանորոգման , ոռոգման ցանցում կիսախողովակների տեղադրման և մանկապարտեզի շենքի հիմնանորոգման անհրաժեշտության մասին:

Համայնքի ղեկավար Դ. Կարապետյանը համագյուղացիներին խնդրեց ավելի ակտիվ մասնակցություն ունենալ համայնքում տեղական ինքնակառավարման աշխատանքներին՝ դրանով պայմանավորելով հետագայում համատեղ ձեռք բերվելիք հաջողությունները: Իր ելույթում համայնքի ավագանու անդամ Մելիք Հարությունյանը նշեց, որ համայնքի ղեկավարի 2016թ-ի առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքները համահունչ է համայնքի ֆինանսական հնարավորություններին և առաջարկեց հավանություն տալ կատարված աշխատանքներին:

Իր խոսքում Արմավիրի մարզպետարանի աշխատակից Գևորգ Գևորգյանը կարևորեց տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակչության մասնակցությունը, նշելով նաև որ Արմավիրի մարզպետարանը ինչպես միշտ օգնելու է համայնքի համայնքապետարանի աշխատանքների մասնագիտական գործունեության իրականացմանը և համայնքի ղեկավարին աջակցելու գործում:

Ժողովը դրական գնահատեց համայնքի ղեկավարի 2016թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքները:

Համայնքի հիմնախնդիրները՝

1. Միջհամայնքային ճանապարհների բարեկարգում: +3
2. Կուլտուրայի տան դահլիճի վերանորոգում: +1
3. Ոռոգման ցանցի կիսախողովակների տեղադրում: 4
4. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում: + 2

Ծաղկունք համայնքի ղեկավար՝ Դ. Կարապետյան